


ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիոյ համար	12 փր.
ստեկան	6
վեցամսեայ	6
Արշասահմանի համար	15
ստեկան	8
վեցամսեայ	8
Ամերիկայի համար	3
ստեկան	3
վեցամսեայ	1.50

Մանուգրան տղը ստա շին երեսին համար 40 ս. իսկ վերջին երեսին համար 20 ստեկան է. երեսին աւելի անգամներու համար 20 0/0 զեղչ կը լայ:

Վառնայի համար ձևի 40 ստեկան



ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՐԻՆ. ԲԱՂԱՔՍԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԶՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐՈՒԹ ՕՐԵՐԸ

Отговорникъ СТЕПАНЪ КАНАРЯНЪ

Նամակ եւ դրամ որկեց խաղաղութեանս հասցեին

Редакция на вѣстникъ "Шаржуъ" Варна

Redaction du journal "Charjoum" (Bu garie) Yarna

Պուշկարիոյ համար ձևի 15 ՍԱՆԹԻՄ

Արշասահմանի համար ձևի 20 ՍԱՆԹԻՄ

Գրութեանք եւ չեն տրուիր

ՇԱՐՈՒԹ Ի ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵԳԻՆԸ ՊԵՏԻ Է ԿԱՆՈՒԿ ՎՃԱՐԷ

ԻՆՉԻ ՄԵՔ ԷԼ ՉՈՒՆԵՆՔ

—(—)

2.

Տասնհինգ ասորական մեր գործնական յեղափոխական կեանքում մեր յեղափոխական կազմակերպութիւնները հազիւ տասնհինգ հոգի ինտելիգենտ զուտ յեղափոխական գործիչներ են առեւել երկրին, և գրաւորից միայն մի մասը կարողացել է երկրում մի, երկու. ամենաշատը երեք տարի դիմանալ. Գրու գլխաւոր պատճառներից մէկն էլ, գիւցե և հիմնականը, այն է որ տաճկահայ ինտելիգենտները, որը երկրի պայմաններին լաւ ծանօթ լինելով, ու տեղական լեզուն տիրապետելով ահագին օգուտներ կարող էր տալ յեղափոխական գործին յարատեւելով իր գործունէութիւնը, ընդհանրապէս հետու է փախել յեղափոխական գործից: Տաճկահայ ինտելիգենտը մեծ մասամբ արտասահմանում ներկայացել է անխիղճ և չափազանցող քննադատ յիպոփոխական գործունէութեան, միշտ քննադատելով գրութեան օգուտը ու մեր իբր թէ անպայման սխալ ուղղութիւնը:

Մինչդեռ այդ յեղափոխական քննադատները պարտաւոր էին երկրում փորձել և ճիշդ գործընել իրենց քարոզած գործունէութեան սխալները իրագործելու իրենց քարոզները չեն ազգում, որովհետեւ դատողութիւնները չեն հիմնված գործնական փորձերի վրա, այլ արդիւնք են շատախօսութեան, ժողովրդային ընկած արամադրութիւնների և ձախող արդիւնքների տպաւորութեան, որոնք կարող են տեղի ունենալ նոյն իսկ ամենալաւ կազմակերպված յեղափոխական գործունէութեան միջոցին:

Անշուշտ, անուրանալի է որ ուսանայ և տաճկահայ ժողովրդները, մասնաւորապէս ինտելիգենտների մէջ նկարագրային

տարբերութիւնը շատ մեծ է, չընորհիւ ապրած միջավայրերի և ստացած կրթութեան ու դաստիարակութեան. սակայն հենց ցաւը նրանում է որ տաճկահայ ինտելիգենտների փախելով յեղափոխական դժնդրական ասպարէզից, հայ յեղափոխութիւնը զրկել է այն առաւելութիւններից որը կարող էր և պէտք էր տալ:

Թացականչողներ, ողբացողներ սգացողներ, հայհոյողներ շատեր գտնվեցին, որոնք յայտարարում էին—մեր երկրին պայմաններու անծանօթ ուսանայիքը եկան գործին սխալ ուղղութիւն տուին, բայց չէին գտնվում իրական յեղափոխական տաճկահայեր որոնք երկրում իրենց յեղափոխական տարբեր ծրագրերն ու գործունէութեան սխալները առաջ տանէին: Տաճկահայ իրական յեղափոխական ինտելիգենտը, ինչպէս և ժողովուրդը միշտ ուսանայ գործիչների հետ ձեռք ձեռքի տուած էին գնում և այդ իրողութիւնը հետեւանք է այն ճշմարտութեան, որ կամ սխալներ ճիշտ էր և իրական յեղափոխական ինտելիգենտ տաճկահայը գնում էր ուսանայի գծած ծրագրովը, կամ թէ տաճկահայ ինտելիգենտներ չափից աւելի քիչ լինել էր մասնակցում յեղափոխական գործին—ու փոքրաթիւ իրական գործիչ տաճկահայերը կամ ապամա են թարկվում էին ուսանային:

Այդ երկու ճշմարտութիւնն էլ որոշ չափով գոյութիւն ունեն մեր յեղափոխական գործունէութեան մէջ, և մեր խոշոր ձախողվածների մեծ մասը պարտական ենք դրանց:

Եթէ տաճկահայ իրական յեղափոխական ինտելիգենտներ ստուարաթիւ լինէր, և պէտք է որ լինէր, որովհետեւ առանց երկրի հասունացած յեղափոխական ինտելիգենտների մի երկիր չէ կարող կանոնաւոր ապստամբութիւններ ստեղծել, հարկերից ու թտուել հաւանական է, որ մեր կորուստները մի երրորդ մասը

գրէ գոյութիւն չէր ունենալ: Եթէ տաճկահայ յեղափոխական ինտելիգենտներ կարողանար իր երկրից դրամ հայթայթել յեղափոխական գործունէութեան համար, հաւանական է որ նա աւելի քիչ ենթարկվէր ուսանայի բարոյական ազդեցութեան:

Այս բացասական կողմերը պատճառ եղան հաւասարակշռութիւնը կորցնելու եւ կու տարբեր միջավայրերի յեղափոխական տարբեր փոխադարձ ազդեցութեան և կշռի ծանրութիւնը անցաւ Ռուսահայ գործիչների կողմը: Մինչդեռ իրականութիւնը և արամաբանութիւնը պահանջում են որ գերակշռող վարող ուժը ներկայանայ երկրի ապստամբը, բայց ոչ գրութեան եկող օգնական ուժը:

Կրէտեի ապստամբութիւնը վարում էր բուն կրէտացին. յոյները դրսից օգնում էին կամ ներս մտած միջոցին ենթարկվում տեղական ուժերին:

Յունական ապստամբութիւնը վարում էին յունաստանի յոյները, իսկ գրութեան յոյները միայն օգնութեան էին գալիս:

Իտալական ապստամբութիւնը վարում էին երկրում գտնվող ուժերը, դրսի իտալացիները միայն օգնութեան էին հասնում:

Իուզարական ապստամբութիւնը վարում էին Իուզարիոյ ուժերը, դրսից միայն օգնութեան էին գալիս:

Կուբայի ապստամբութիւնը վարում էին ներսի ուժերը, Ամերիկայի և ուրիշ տեղերի կուբացիները միայն օգնութեան էին գալիս:

Մակեդոնացիք էլ մեր շրջանը ունեցանք 90 թւականներից սկսած մինչեւ վերջի տարիները գրութեան էին մակեդոնական յեղափոխութեան թէ օգնողները և թէ վարողները, բայց այսօր ներանք էլ ընկան իրական ճամբու մէջ: Այսօր ներքին ուժն է որ գործը վարում է և դրսի ուժերից միայն ենթարկում է պահանջում:

Մենք էլ պէտք է աշխատենք մեր գործունէութիւնը այդ հոգի վրա գնել. և այդ կը յաջողվի միայն այն պարագային երբ Տաճկահայ ինտելիգենտներ ինքը ընդգրկէ յեղափոխութիւնը ոչ Պարիզում, Լոնտոնում, Իուզարգարիայում և Ամերիկայում, այլ երկրում ճանկաստանում:

Ուրիշ կերպ յաջողութիւնը անկարելի է:

Իրողութիւն է որ այլևս տաճկի հետ հաշտվել, նախկին դրութիւն ստեղծել անկարելի է. յեղափոխութիւնն է միակ ելքը այս գոփոխյին կացութեան. և եթէ Տաճկահայը անկարող եղաւ ներս կայ շրջանում իր մէջ, իր ծոցում ստեղծել գիտակից, իր ամէն մի քայլը չափող կշռող յեղափոխական վարիչներքին ուժնա կորսված է, կամ կորսվելու ճամբու մէջ է:

Ահա ինչ ծանր խնդիր կայ Տաճկահայ ինտելիգենտների առջեւ, որի դրական լուծման համար եթէ նա իր ճիշդը չը թափէ, շատ ստոր պէտք է ճանաչվի:

Այլ Գարբիէլեան մարգոց մենք խորհուրդ կը տայինք, փոխանակ քննադատականները դրելու և արտասահմանում տարածելու իրենց գաղափարները, որոնց մէջ ճշմարտութիւնների հետ կան և չափազանց անհեթեթութիւններ, մեկնել երկրի իրենց հետ տանելով և նման դատողներին, մտածողներին, ու այն տեղ իրենց քարոզած յեղափոխական գործունէութեան սխալները մտցնել փորձել. այդ տեսակ պահպանողական յեղափոխական մտածողներն էլ պէտք են երկրում, բաւական է որ անձնազոհ լինեն. նրանք կարող են չափաւորել անխորհուրդ եռանդները: Սգալ զժբախտութիւնների վրա, դատափետել այն մարգոց, որոնք այսպէս թէ այնպէս, իրենց հասկացողութեամբ, գրուիւնները գրպանին զրած սլանում են տաճկական դժոխքը, իրենց անձը ներում հայրենիքի

փրկութեան գործին, արտասահմանում նստել և մի փորձ չանել, երթալ գոնէ այդ գծախառնութիւններէ զոչնչի ցտեղը մտնելից գիտելու զա վատ, պախարակելի գործ է:

Եւ Գարբիէլեանի նման, յապետութիւն ունեցողները պարտաւոր են, եթէ այդքան ցաւում են ազգի դժբախտութիւններէ վրա, սլանալ դէպի երկիր, այնտեղ ճառելու, այնտեղ գործելու, որովհետեւ արտասահմանի լսողները չեն որ յեղափոխութեան ծանրութիւնը իրենց ուսերի վրա են տանում, այլ Սասունցիին, Տարօնցիին, Էրզրումցիին, և երկրում ապրող ամեն մի հայ:

ՎԱՐԴՈ

ՍԱՔՍԻՍՕ ԿՈՍԵՑ

ՔՈՒՐԱՅԻ ԱՊՍՏՈՒԹՅԱՆ ԳԵՆԵՐԱԼԻՆԻ ՄԻՆ

Վերջերս, 73 տարեկան հասակին մէջ մեռաւ Քուրայի անկախութեան համար մղուած պայքարի հերոս Մաքսիմ Կոսեցի, Օտար թերթերը Ամերիկեան այդ կարեւորութիւն կեանքին մի քանի մանրամասնութիւնները պատմելով կուսեցիներ, թէ և ան ծնունդով Քուրայի չէր այլ Սան Տոմինկոցի, ուր իսպանական զօրքին մէջ կը ծառայէր, բայց ամբողջովին տրուեցաւ Մեծ Անթիլիոյ անկախութեան գաղտնի, որը իր կեռը և զաւկերնրուն հայրենիքն էր:

Ան 1868-1875 թւի Քուրայի ապստամբութեան մասնակցեցաւ եռանգուն կերպով, ու սարսափելի հակառակորդ հանդիսանալով իսպանական Մարչալ Մարթինէս Գամբոսի 14 օրուան մէջ կրցաւ կղզին մասնալու իր ծրագրերը իրագործել, Յանթօնի գաղտնագրութեան վերջը, որով վերջ տրուեցաւ այդ 8 տարուան կռիւին, Մաքսիմ Կոսեցի կղզիէն նեոանալով շարունակեց յարաբերութիւն պահպանել Քուրայի

անկախութեան կուսակիցներուն հետ: 1883 Եւրոպայի մէջ Կոսեցի պատրաստ էր գործի սկսել, բայց հազիւ 1895 որոշուեցաւ վճարողական կոնքր սկսել:

Այդ ատենն էր որ ապստամբութեան վարիչներէն մին ինքե Մարթի կոչ ըրաւ Մաքսիմ Կոսեցի, որ կապէր Սան Տոմինկոյ Կոսեցի անմիջապէս իր երկու զաւակներուն հետ միասին կը մեկնի Քուրա ու ապստամբութեան վարիչ կը տեսնայ նաև ժողով Մաքսիմի վերջին այս երկուքը սպանուեցան:

Կոսեցի իր մէկ զաւակը կորսնցուց, բայց կոնքր շարունակեց եռանդով իսպանացի զօրքերու դէմ, որոնք սկիզբները հրամանատար ունէին Մարչալ Պլանքի, վերջն ալ զօրավար Վէլէր:

Միացեալ նահանգներուն միջամբտութիւնը, ինչպէս գիտենք, օգնեց որ Քուրայի հայրենասէրները վերջնապէս յաղթեն:

Քուրայի անկախութիւնը ձեռք բերուելէն յետոյ Կոսեցի մեծ ազդեցութիւն ունէր կղզիին մէջ հասարակագետութիւնը կազմակերպելու խնդիրներու վերաբերմամբ և յաջողուց իստորտի Բալմայի նախագահ ընտրուելը, որը երբեմն ներ-իօրքի բուրայեան յեղափոխական իմբակի նախագահը եղած էր:

Իր վերջին օրերը Կոսեցի որ մինչեւ վերջը աղքատ մնաց, համեստութեամբ կ'ապրէր Հաւանայի մէջ, ուր և մեծ յարգանք կը վայելէր:

Այս կենսագրականէն կը տեսնուի որ Քուրայիները յեղափոխութեան ձեռնարկը են 60ական թւականներին եւ հազիւ ազատեցան դարուս վերջը:

Քուրայի անկախութիւնը տեսեր է 30 նոյնիսկ աւելի տարիներ, Մենք հայերս որ հազիւ 15 տարի է ի վեր իրական յեղափոխական գործունէութեան սկսած ենք, սարսափելի դժգոհ ենք որ ասանկ կարճ ժամանակի մը մէջ չը կրցանք մեր նւապատակին հասնիլ:

Կսեն որ մենք շատ զոհեր տուած ենք, Քուրայիներն ալ քիչ զոհեր չը

—Այդ իմ ամենայնմար զգայնա կանութիւններէց մին է, որոնց համար առահասարակ Արինան գլուխս կըրճում է:

Ինքս անձամբ խոստովանեցի Աֆանասիչին, այն միջոցին երբ ապաշխարելու համար ուզում էի եւ Աֆանասիչի հետ ամուսնանալ: Դեռ չէր չկար ինձ հարցնել եւ այնպէս վաղ թէ ոչ պէտք է իմացվէր, ինքը պէտք է հասկանար: Աղջիկը քանի մեծանում հօրն է նմանում. իսկ աչքերը իմս են... կենդանի փաստ է իսկ Աֆանասիչը, չը պէտք է ուրանալ երեւելի հոտառութիւն ունի: Մինչեւ օրս նա գերեզմանի պէս լուռ էր: Արինան պարտում էր որ Աֆանասիչը չէ սիրում, երբ կատակում է իմ առթիւ, կամ թէ ինչում ինձ, իսկ հիմա յանկարծ, ամեն ինչ դուրս է տել: չեմ հասկանում, բացարձակապէս չեմ հասկանում... բայց բա է այդ մասին, Հա, առաջ նախ քան պատկի ծրագրիներէ մասին խօսելը, ինչ էի ասում: Այո, իմ բարեկամ այր մարդոց մասին, թէ ինչպէս լաւ եմ ապրում զբանց հետ եւ նրանց լուրջ

տուին. իսպանական կտոմարութիւնը թրջականէն ոչ պակաս վայրագութեամբ կը խեղդէր, կամ կաշխատէր խեղդել Քուրայի շարժումները. ու այդ երկար տասնեակ տարիներու մաքառումին միջոցին Քուրան ոչ պակաս դազանութիւններու եւ սարսափներու վայր դարձաւ չնորհիւ իսպանական արիւնարբու զօրավարներու եւ զինուորներու: Սակայն այդ ամէնը չընկճեցին Քուրայի եւ ան վերջ ի վերջոյ յաղթանակեց:

Հ Ա Ս Լ Ե Թ Ը

ՊՈՒԼԿԻՆԻ ՌՅԻՆՍԻՆ ՎՐԱՅ

Յիւլիոյ, 13 յունիս 1905

Երէկ գիշեր Յիւլիպէի հայ հասարակութիւնը տեսաւ բոլորովին նոր բան մը: Տաղանգաւոր դերասան Կարապետ Գալֆայեան փայլուն յաջողութեամբ ներկայացուց Նէյթսթրիի «Համլէթ» Թարգելի արուեստագետին հետ կը խաղային տեղւոյս թատերասէր խումբի սիրողները որոնք խղճի մտօք աշխատել էին իրենց գերերը լաւ կատարել և պէտք է ըսել անոնք ալ իրենց կարգէն իբրև սիրող ունեցան յաջողութիւններ: Որոշ կերպէր որ սիրողները աշխատած են եւրոպական արուեստագետի մը ղեկավարութեամբ և եղած են անոր արթուն աշակերտները: Թատրոնը լեցուն էր մինչեւ բերանը: Կային նաև օտարներ:

Երրորդ վարագոյրին բեմը ծածկուեցաւ օթեակներէն տեղացող ծաղկեփունջերով: Ատկէ զատ մոռոզուրդին մէջէն պարոն մը դուրս եկաւ՝ ձեռքը կանաչ ու ծաղկազարդ պսակ մը բռնած ու նուիրեց շնորհալի արդիստին: Պուլկար դերասանները և աճուա-

յարաբերութիւնները ձեռք բերում... Սակայն, դուք չը կարողացաք բուրունի հետ էլ այդպիսի լուրջ յարաբերութիւններ ստեղծել, նկատեցի ես...:

Վիկտորիան ուսերը շարժելով կտրուկ կերպով պատասխանեց. —Նա կատարած է:

Ս: Ինչ քիչ լուրջ յետոյ, մատները սեղանին զարկելով շարունակեց.

—Գիտե՛ք, այդ բարեկամութիւնները մէջ կայ մի պայման. մրցումը եթէ կայ, այդ ոչինչ, մինչեւ անգամ լաւ: Դուք իմ տօնախմբութեան միջոցին շատ մրցակիցներ տեսաք, որոնք ինձ հետ կապված են բարեկամութեամբ. այդ չէ խանգարում որ նրանք իրարու հետ լաւ վարվեն: Բայց պէտք է որ մրցակիցները մէջ երջանիկ եւ դժբախտ չը լինեն. պէտք է որ նրանցից ամէն մէկը մտածէ որ ամէնքն էլ հաւասարապէս դժբախտ են ու հիմք չունենայ դրացուն նախանձու: Բոլորն էլ բարեկամներ են եւ ոչ ոք սիրեկան: Բուրունը շատ լաւ սկսել էր

նի կերտանուհի մը փութացին վեր ելլել իրենց շնորհաւորութիւնները և հիացումը յայտնելու Գալֆայեանին:

Ան արդարև հիանալի Համլէթ մըն էր ան: Այդ ինչ գեղեցիկ լափոխումներ, աչնիւ արտայայտութիւններ, այդ ինչ խորագէտ և խորազննիչ հայեացքներ, այդ ինչ գեղեցիկ լեզու:

Գալֆայեանի «Համլէթ»-ը ամենքն աղաւթեցին վերէ: Անիկայ գեղարուեստի մէջ բարձրութիւն մըն է, որ կարելի է միայն տեսնել: Չգալ, վայելել: Բայց ոչ բացատրել: Խօսք չենք գտնէր յայտնելու համար մեր հիացմունքը և սքանչացումը:

Գալֆայեան ունի երկնատուր ձիրքեր և բնածին հանճար: Ա. Թ.

ԳՈՒՅՈՒՄՃԱՆՆ ԿԱՐԺԱՐԱՆԸ

Ինչպէս յայտնի է մեարժումսի ընթերցողներուն, քաղաքիս հարուստ վաճառականներէն Տիար Սարգիս Գուլումճեան իր մէկ սեպհական հողին վրա՝ որ 6000 ֆրանք կարժէ, աղջկանց վարձարան մը կառուցանելու կուտայ այս պահուս: Կրգէն, երկու շաբաթ առաջ, հիմնարկէքի աբարողութիւնը կատարուած ըլլալով շէնքին գետնայարկը աւարտած է և կը յուսացուի թէ ամբողջութիւնը պատրաստ կըլլայ յառաջիկայ դպրոցական վերամուտին: Ոտոյգ աղբիւրէ առնուած տեղեկութեանց համեմատ, 12000 ֆր. ծախք պիտի ըլլայ լո՛ւկ շէնքին համար:

Անցեալ կիրակի, 12 յունիս, երկսեռ վարժարաններու պատհոցաբարձութիւնը, ի պատիւ Տ. Սարգիս Գուլումճեանի, բազմ-

վարժելու և ընդհանուրին յարմարելու, բայց յանկարծ միտքը գրել է քրքրել հասկանալու համար Յենիայի ծագման պատմութիւնը ու առաւանական ամբողջ հարստութիւնը ոտքի է կանգնել: Կաղծեմ, սէրն է անպատեւած. ինչպէս իրա մեծ եւ ճշ ստորնացված է. ինչ որ անպիտանի մէկը ինձ տիրացել է, իսկ իրեն ծագումն են, արհամարում: Ձէ կարելի հանդուրժել, զիմալը պէտք է վարանել, անպատեւել. եւ պիտո՞ց...:

ՅՆՆ լաւ է որ երէկ Վիկտորիայի շրթունքներէ վրա երեւցայ խմբագրման կ'ապի, նա չսպանեց Արինային, երբ նա իմ սենեակից հեռանում էր... Սխրաւար խենթը ամեն բանի ընդունակ է, նա կարծի էր չը հաւաստայ ոչ չը շարժեցողութիւն եւ ոչ էլ գլխի կապոցին: Իսկ գնտանիք խենթ է... Ձէն Աստուած հետը, թող հեռանայ, երթայ. որչափ չուտ այնքան լաւ: Ծատ նախանձեց եւ կասկածներ կ'ընց, Այդ ալուրից տելի վատ թոյն է:

Դուք կարելի է որ հարցնէք, շարունակեց Վիկտորիան, Բուրունի մա-

Ա. ԱՄՅԻՏԵԱՏՐՈՎ

ՎԻԿՏՈՐԻԱ ՊԱՎԼՈՎԱ

(Տօնախմբութիւն)

(Փրագէտի յիշողութիւններէ) Ամրան սրկածներ քաւակուն սարսիկակ հաւարակութեան մէջ

(Թարգմ. ուսերէնէրց)

Ը.

(Շար. նախորդ թիւէն)

—Դուք ինձ ասացիք որ Արինա Յեո տօրօվեան կարողացաւ ձեր աղջկայ ծնունդը թագցնել: Երբ և այդ գաղտնիքը միայն գաղտնիք: Ուրեմն Աֆանասիչն էլ գիտէր այդ գաղտնիքը, նկատեցի ես:

Վիկտորիան նեղութեամբ գլուխը շարժեց, պատասխանելով:

մախորակի և ճիւղաճառակներով մը տուաւ, որոնք հրաւիրուած էին 25 անձեր: Ժամը 11ին, եկեղեցւոյ աւարտումէն ետքը, հրաւիրեալներն առաջնորդուեցան արական վարժարանը՝ որուն դռան առջեւ սանտրոն ու սանուհիները ներգաղչակ երգերով և երգիներով ծաղիկներով դիմաւորեցին կոչնականները: Ազգական վարժարանի աշակերտուհիներէն Օր. Հ. Ս. Փափազեան և մանչերու դպրոցէն պ. Գէորգ Թորոսեան մէյմէկ ուղերձ արտասանեցին: յետոյ պ. Վահէ Զուլճեան բանախօսելով ի վեր հանեց Տրար Գույումճեանի երախտիքին արժէքը:

Ճաշի միջոցին, առաջին անգամ բաժակաճառ մը արտասանեց տիար Յարութիւն Աւանան որ ըսաւ թէ Ծ—Ծ տարի առաջ քաղաքիս ազգայիններուն նիւթական և բարոյական աշակերտեամբ արական վարժարանը կառուցուեցաւ և ազգական վարժարանին պէտքը ալ խիստ զգալի դարձաւ: այսօր, շնորհիւ Գույումճեան Սարգիս աղայի, զոր հացում կը տրուի անոր:

Երկուստեք վարժարաններու հոգաբարձութեան ատենապետը տիար Ս. Յակոբեան՝ պատմական տեսութեամբ մը պարզեց թէ ի՞նչ փուլերէ անցած է ազգական վարժարանը երեսուն տարուան միջոցին, թէ ինչպէս Ալանեան, Ստեփանեան, Գույումճեան և այլք իրենց դրամը չեն խնայած անոր յարատեւութեան համար: Այդ շէնքը, սակայն, բոլորովին հինցած ըլլալով՝ արդի պահանջներուն տնտեսապատասխան է, հետեւաբար՝ տիար Գույումճեանի ձեռնարկը խիստ գնահատելի է:

Ի դիմաց ուսուցչական մարմ-

նոյն, Վ. Տաքէսեան շնորհակալութիւն յայտնեց հիմնարկորին, որ ներ և օգտաւն դպրոց մը կը ընծայէ քաղաքիս մատաղ ազգական: Ամենէն աւելի ուսուցիչները կը կոչուին նոր դպրոցին կառուարութիւնը, քանի որ առաջադրած են միտքով ու մարմնով առողջ սերունդներ պատրաստելու: Այս թաղ խորհրդոյ և ազգատանամ ընկերութեան անդամ տիար ստեփան Գասպարեան երկարօրէն թուեց այն բարիքները զորս տիար Գույումճեան չէ զլացած Ռուսճուքի եկեղեցւոյն և ազգատներուն: Հետեւէն թէ մօտէն, ամէն առթիւ, օգնած է բարենպաստակ գործերու և սրտով կապուած է իր ծննդավայրին:

Վերջին բաժակաճառն արտասանեց տիար Հմայեակ Փափազեան: Յայտնեց թէ 4—5 տարիէ ի վեր, Ռուսճուքի երկուստեք վարժարաններուն զեկը ձեռք առած է բանիմաց երիտասարդներէ կազմուած հոգաբարձութիւն մը՝ որ բոլորանուէր կաշխատի Ռուսճուքի հայ մանուկներուն զատի արակութեան ու կրթութեան համար: Հիմա գլխովին բարեփոխուած է գաղտնիներուն նիւթական և բարոյական վիճակը: մաղթելի է որ հոգաբարձութիւնը միշտ իր պաշտօնին վրայ մնայ և միեւնոյն եռանդով յառաջ տանի իր փափուկ պաշտօնը:

Ճաշէն յետոյ, կոչնականներուն լուսանկարը քաջուեցաւ, և ամէն ոք շնորհակալութիւն յայտնելով հոգաբարձութեան, մեկնեցաւ ու բախ տպագրութեամբ:

15 յունիս 1905
Ռուսճուք




ՆԱՄԱԿ ՍՈՒՉԱԽԱՅԷՆ

ՍՈՒՉԱԽԱ, 20/7 յունիս 1905

Քանի մը օր առաջ, առաջարկեցի մեր քաղաքի և քաղաքացիական և քաղաքացիական վեհաժողովի որ մեր անմտաւան Քրիստափորին համար հոգեհանգիստ մը կատարէ: Հայր Վեհաժողովի ամենայն սիրով յանձն առաւ ու այն օրու ընէ սկսեալ ամբողջ ժողովուրդին իմացոյց որ յունիս 18/5 կիրակի օր ամենքն ալ եկեղեցի գան հոգեհանգստին ներկայ գտնուելու համար: Իրօք հոգեհանգստին օրը եկեղեցին գրեթէ ամբողջովին լեցուած էր երկսեռ բազմութեամբ, որոնց մէջ օտարներ ալ անպակաս էին: Պատարագին աւետարանը կարգաւէն առաջ հայր սուրբը սկսաւ իր քարոզը օրուան տօնի առթիւ, երկար ու բարակ աստուածաբանական բացատրութիւններով, վերջ ի վերջոյ յայտարարեց, թէ քարոզը կարճ պիտի կտրէ, որովհետեւ եկեղեցիի աւարտումէն վերջը հոգեհանգիստ կայ: Աւագու բառերով բացատրեց մեր ողբացեալ Քրիստափորի անցուցած կեանքը ու անակնկալ մահը: Ժողովուրդէն պահանջեց որ ոչ ոք դուրս չելլայ և ամենքն ալ ներկայ ըլլան հոգեհանգստին:

Հոգեհանգիստը շատ ազդու էր, հայր սուրբը Հայաստանի մէջ նահատակուողներու ցանկ մը պատրաստած էր, ինչպէս նաև յիշեց կողմասեան վերջին կոտորածները և այդ առթիւ նահատակուածները: Ժողովուրդը մեծ տպաւորութեան տակ հեռացաւ եկեղեցիի բակէն:

Շաւարշ Մեծիկեան



Թ Ղ Թ Ա Խ Ա Ղ Ի Ք Լ Ի Ի Պ Ն Ե Ր Ը

Բ Ե Թ Ե Ր Ս Պ Ո Ւ Ի Կ Ի Մ Ե Զ

Սամանակէ մը ի վեր առաջին թերթերը կը նկարագրեն զանազան իսպառնակ գործեր, որոնք այսօր, երբ պետութիւնը եւ ժողովուրդը սարսափելի պարտութիւններ կը կրէ, մայր ու քոյրեր հայրեր, որդիք կ'ողբան հետու արեւելքին մէջ մահացած սիրելիներուն վրայ, արիւն արցունք թափելով, շատ գեշ տպաւորութիւն կը գործեն:

Բեթեւապարկի մէջ, Վեթիւրութիւնը թիւսը յիշ առաջ շատ ինկած վիճակ մը ունէր. անոր անդամները սակաւաթիւ և շնչին մարդիկ էին, վաճառատան ծառայողներ, պանքայի ստորին պաշտօնեաներ, և այլն: Ստակի պակասութիւնը քրօնիքական էր և որոշած էին զայն գոցել:

Բայց կը գտնուի Կորչօվսքի կոչուող ատամնարոյժ մը որ իր օգնութիւնը կառավարէ Գլխակին, սակայն պայմանով մը գործառնութիւնը իրեն յանձնուի, և ինք կը պարտաւորուի անդամներուն վճարել եկամուտին 15 0/0:

Ան կը յայտարարէ որ մեծ քիւպաները անմատչելի են ամբողջին, որ կարենայ բախտը փորձել թղթախաղի մէջ, ինք կուզէ որ այդ Գլխակը մատչելի ըլլայ և սիրելիներուն երբ անդամները իրենց վախը կը յայտնեն իշխանութեանց միջամտելու մասին, Կորչօվսքի կը պատասխանէ: Յիմարութիւն է. որչափ հասարակութիւնը անձնատուր կը ըլլայ թղթախաղի, գիտու և զէքի այնչափ աւելի կը հեռանայ քաղաքականութեամբ հետաքրքրուել: Իսկ իշխանութիւնը այնչափ տխմար չէ որ այդ չը հասկնայ:

Իրօք Կորչօվսքի կ'ստանայ իր պահանջած լիազօրութիւնը և Սրէթիւլասի տըր յաջող ելք կուռնեայ:

Գլխակին մէջ որ այսօր իր նոր շինութիւնը ունի՝ անվտանգ բրօքթիւն վրայ 40,000 ռբ. տարեկան վարձով, ամեն օր կը հաւաքուի պէս պէս հասարակութիւն մը երկու սեռէն ալ և ամենաստորին գասակարգի շերտայացուցիչներով: Գլխակին օրական եկամուտը արդէն հազար բուրձի կանցնի:

սին խօսքը կտրելով, թէ ես ինչպէս եմ կարողանում դիմանալ այդ լաւ լուրջ յարաբերութիւններին մէջ. էն, ես կարող եմ թողարկել ձեզ որ ոչ ամէնքի հետ եւ միշտ կ'անդադնեմ ամենէն, Բայց երբէք, բացի նրանից, որին ես անձնատուր եմ եղել, չէ գիտեցել իմ խենթութեան մասին: Եւ անձնատուր եղած մարդիցմէլ ես բացի լուսթիւնից, ուրիշ ոչ մի պարտականութիւն չեմ պահանջել, յաւիտեանական լուսթիւն: Դուք գիտով նայել խենթութեան հաւատում էք, հարցրե՛ք Վիկտորին՝ արժագանք զը լուսթիւն կողմէն լուրջով:

— Ինչ է նշանակե՞մ, հաշտում եմ, զարմացած հարցրի ես: — Զէ որ ճիշդ պարբերական արբեցողութիւնը ընդունում են իրրեւ կամքի թուրթիւնը: Իսկ Վեճառում էք որ այդ հիւանդ դուրսը, ալիօական մի ցիկլոն է: Թողում է մարդի վրայ շքերթով շարժու փշուր անուճեւ սլանքով հեռուն: Իսկ լքած կ'իստսեմ վիճակում մարդը հազիւ կարողանում է ըմբռնել թէ ինչ պատահեցա՞ր հետ և օգի՞

կաթիլ չէ դնում բերանը, ու նրա հոտից փախում է այնպէս, ինչպէս սատանան խաչից... հաւատում էք, — էն, հաւատում եմ:

Արեւմտահայաստանէք եւ նրան որ պարբերական արբեցողութիւն կայ ոչ թէ միայն գիտով, այլ եւ միւս կրթերով:

Լուրջ եւ լաւ յարաբերութիւններից ես չեմ վախենում, ոչ ոքի մօտ կուրթիւնից, նոյնիսկ Անտոնիւսից եւ Բելվետրիան Ապոլոնից, որովհետեւ բնութիւնը ինձ տարօրինակօրէն ցուրտ եւ անկիրք է ստեղծել կեանքիս մեծ մասում: Ես չեմ հասկանում մոխրի տակ վառվող կրակները, այդ խառնածքները որոնք խառնուածքներ կրթից գողում են: Քայքայ մերթ ընդ մերթ ինչ որ չպի ստեղծելով լուրջ է բանականութիւնս, հպատակեցում ինձ մարմնի եւ արիւնի ճշան պահանջներին, որոնք յանկարծ բարոստացել են երակներին մէջ. ու այդ ինձ վրայ յարձակվում է ինչպէս պարբերական արբեցողութիւն, շարունակվում եւ ընդհատվում թրթեւ պարբերական արբեցողութիւն:

Եւ ինչպէս այդ տեսակ արբեցողները, եթէ նրանց օրը չը տաս, ձեռքերը ընկածը—օտարօրէն եւ այլ ուրիշ բան կը լսէ, այդպէս է եւ այս պարագայում:

Այո, ես ձեզ պատմեցի թէ մենք ինչպէս երեք կիներ ձեռքը միմեան անցրինք ու ինչպէս ես վայրենացել էի այս ցուրտ բանտում ապրելով կոշտ եւ աղտոտ գեղջկուհիներէ հետ: Զէ ո՞ր նրանք նախնական շրջանի էգեր են: Կուշտ են, աշխատութիւն չը կայ եւ երբ ուղիւ կարող են արբեցել: Բացի անասնական մտածումներէ, գլուխներում ուրիշ բան չը կայ. ամբողջ ձմեռուան երեկոներին խօսակցութեան նիւթը սիրիք պատմութիւններ են երեցկիւնների, գործաւորների մասին:

Աւետարանայեցէք որ այդ տեսակ պայմաններում յանկարծ վրա է հասնում այդ պարբերական արբեցողութեան շրջանը, որի մասին պատմեցի կատաղած, պահանջկոտ, առանց ո եւ է ընդդիմութեան ո՞ւր կարող է տանել նետել: Մեն մենակ իր զէմ մաքառելը շատ զըժ-

ւար է: Այդ տեսակ վայրենացում եթէ ինձ մօտ լաւ մարդ լինի, ինձ վրա գործող ազդեցութիւն ունեցող, գոնէ այնքան որ Արիւնան ունի. նա ինձ կը ստանձնադառնի եւ թող չէր տար որ ես ցաւալի գլխու մեծ ունեւայի: Բայց Արիւնան զսպող չէ, ընդհակառակը ափսոսող: միայն ամեն ինչ գաղտնի, ծածուկ լինի թէ չէ որքան լիրք, այնքան լաւ: Արիւնան չէ հասկանում է ինչպէս կարելի է հաճոյքից հրաժարվել եթէ ներա իրագործուած անվտանգ է:

— Ինչու ինչ օգուտ դրանից: — Ընդարիւն, երբեմն ինձ թուում է որ ես Արիւնայի համար այն եմ ինչ որ քաղաքակրթված մարդոց համար թեթեւ վարքով ներկայացուցիւնը, կամ Ֆրանսական թեթեւ վկայութեւ նրան զարձացնում եմ. նա բեւական գիտէ բոլոր իմ մտորումները եւ դրանք նրա սիրելի իշխանութիւններ են: Ես նրա գեղեցկագուր թիւնն եմ, եւ որչափ այսպէս սասց, նրա այդ գրագործանում շատ հատորներ գնեմ, այնքան նա ուրախ կը լինի... (Շարունակելի)

Ու այդ քիւրին նմանները սուսկի պէս կը բուսին, իսկ իշխանութիւնը խաղաղօրէն կը դիտէ այդ հիմնարկութեան ցածու մը, հաւանօրէն վարիչ Կորովսքիին կարծիքներուն հետ համաձայն ըլլալով:

Այդ տեսակ հիմնարկութիւններուն եւ աւելի ստորին տեսակներուն քաջաբերութիւնը ոչ ոք կառավարութեան կողմէն նորութիւն մը չէ՝ սակայն ուստի լրագրիչները միայն հիմա կրցան խօսիլ, որովհետեւ մասնաձեւն այսմանները քիչ մը փոխուած են ներկայ ազատական շարժումներուն հոսանքին մէջ:

Ռուսիոյ մէջ ամբողջ օրերով խաղա, քէֆ ըրէ, հանրային տունները այցելէ. քաղաքական հարցերով մի գրադիր, այն ատեն քեզմէ լաւ քաղաքացի չի կրնար ըլլալ: Ռուս կառավարութիւնը իր գոյութիւնը հաստատուն կը համարէ ժողովրդին անբարոյականացման, բթացման մէջ ու միշտ քաջաբերած է եւ դեռ կը քաջաբերէ բոլոր այն հիմնարկութիւնները որոնք խորհելու, դատելու, քննելու ընդունակ մարդոց կրնան անասուն հաստակներու վերածել: Պատիկ երկու երեք հազար բնակիչներով քաղաքներն իսկ իրենց համարառուները, թղթախաղաղանքներն ունին որոնց մէջ տեղական երիտասարդութիւնը, հանրային կեանքը հսկող պաշտօնեաներու հետ միասին անձնատուր կը լլան անբարոյականութեան բոլոր տեսակներու հետ միասին այն հասարակական բարդ ու կենսոտ խնդիրներէն որոնց դրական լուծումը տիրող կառավարութեան ոչնչացման պիտի նպաստէր:

ՌՈՒՍԻՈՑ ԿԵԱՆՔԸ

—)o(—

Յարին արտասանած ազատական ճառին պատճառած ուրախութիւնը շուտով մարեցաւ:

Ռուսական Բիւրօկրատին այդ ճառին բողոքովին ցնցուած չէ. ընդհակառակը ան թերթներուն պատուիրած է հոշակաւոր կամ տիրապետչական ճառին մասին շատ բացատրութիւններու մէջ չը մտնան:

Չեմսթօյի ներկայացուցիչները պահանջած էին որ Յարին արտասանած ճառը իրենց գրաւոր տրուի եւ երբ ճառը կը յանձնեն, անոր մէջ չեն գտնուիր ցարխ ճառին գլխաւոր խօսքերը, որ ըստ երեւոյթին պիտի ըլլար իմ ցարխական կամքս, ժողովրդային ներկայացուցիչներ հրաւիրելու անդրդուելէ):

«Րուս թերթը ամսուան մը համար դադարուածի դատապարտուած է, որովհետեւ հրատարակած է Չեմսթօյի ներկայացուցիչներուն ցարխ յանձնած ուղերձին բնագիրը, զոր Բիւրօկրատին ապօրինի գործ մը կը համարէ, կատարուած լիազօրութիւն չունեցող պաշտօնական անձերու կողմէ. թէեւ այդ սօքիւմանը ընդունուել է ցարխ կողմէն եւ յանձնուել էր պետական դիւանատան:

Ներքին գործոց Նախարարն ալ չըջարբերական մը դրկած է թերթներու խմբագրութեանց, որով կը յիշեցնէ թէ ցարխ պատգամաւորութեան առջեւ արտասանած ճառին խօսքերը չը պէտք է ընդունուի իբր լրացում

կամ լայնացում փետրուարին հրատարակուած կայսերական հրովարտակին: Այս պարզապէս կապացուցանէ որ Ռուսիոյ տրուելիք բարենորոգումները պիտի ըլլան Պուլիկինի յանձնարարին կազմած ծրագրովը, որը մինչեւ անգամ ըստ ընօօյէ վերջմասի շատ կը սահմանափակէ ժողովրդային հսկումը պետական պիւտձէին վրայ, ուսկէ կը հասկցուի թէ այդ հսկողութիւնը զերօյի պիտի հաւասարի:

Ըստ երեւոյթին կառավարութիւնը, թէեւ պատերազմի շարունակութեան պատրաստութիւններէն վազ չանցնելով, հաստատ տրամադրութիւններ ունի պատերազմը դադարեցնելու:

Այլքսիէլին եւ Պեզօպրազովին պաշտօնանկ ընելը, որոնք ուսական Մայրաքոյն Արեւելքի քաղաքականութեան ուղղութեան վարիչ էին կրնան իբր փաստ ծառայել որ կառավարութիւնը կողմէ վերջ տալ Մանչուրական խնդրին: Ուղղութեան այդ փոփոխութեան գլխաւոր պատճառները են Ռուսիոյ վարկին անկումը մտիկ եւ միջին արեւելքի մէջ, եւ Գերմանիոյ մասնաւոր ձգտումները՝ օգտուել Ռուսիոյ սխալներէն, որչափ կարելի է:

Այս ամենը պարզօրէն կը ներկայացնէ ուս մամուլը. «Իբր, վեոս մասի» թերթը վշտացած կը նկատէ որ մինչեւ անգամ Յարին ուս կայսրութիւնը զանցառելի ուժ մը կը նկատէ եւ անոր չը հարցնէր Գերմանիոյ հետ Մարօքի խնդիրներու համար սկսած բանակցութիւններու մասին: Չարմանալի չը պիտի ըլլայ, կը շարունակէ նոյն թերթը եթէ որ Յարինս Մարօքի խնդրին մէջ Գերմանիայէն զիջողութիւններ ստանալու համար, զոնէ ուսական շահերը Փոքր Ասիոյ մէջ ի նպաստ Գերմանիոյ «Սօփստի» թերթը կենտրոնական Ասիոյ մէջ խլրտուումներ կը գուշակէ Ռուսիոյ վարկին անկման պատճառով, եւ կը պահանջէ որ անմիջապէս Օրէնպուրկ թաղէնթի երկաթուղին երկրորդ գիծը շինուի, որովհետեւ կասկեան երկաթուղին պարսկական խռովութիւններու պատճառով անօգուտ պիտի ըլլայ:

«Եւ, Վ. Ս. Ռուսիոյ այսօրուան կացութիւնը համեմատելով ուրիշ պետութեանց հետ վշտաբեկ կը բացականչէ. «մինչեւ մենք ալ Գրզն մը կամ Բիշկէկ մը չը չընենք» խեղճ թերթի չի հասկնար արդեօք թէ ինչո՞ւ:

Որովհետեւ դուք չունիք Անգլիոյ պետական կազմակերպութիւնը, եւ Անգլիացիի ընդունակութիւնները եւ կորովը:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Բ Գ Ի Ա

Բ. Գուռը պալքանեան պետութեանց զեպանատանց յայտարարեր է որ անհանգիստ չըլլան որովհետեւ Մակեդոնիոյ մէջ տեղի ունեցած մարդահամարը հաշուի չը պիտի առնուի:

— Պէյրութէն կը հեռագրեն որ արար կրօնապետ Մահմետ Ալպտուլ պայտամարներու կողմը անցած է, թուրքերուն անաթիւմ կարգաւորով խալիֆայութեանէն խլուած յայտարարած է զանոնք:

— Չէտիւախէն յունիս 15 ին կը հեռագրեն թէ արարները Մէկքէն արգէն գրուած են եւ շուտով Մանօխան ալ անձնատուր պիտի ըլլայ:

— Պօլսէն կը հեռագրեն յունիս 15 ին. Եէմէնի նահանգապետը թէֆիկ պէյ իր ամբողջ պաշտօնեաներով վերադարձաւ, անոր մարդիկը կը պատմեն որ ինչհիս բերթը յանձնուած է արարներուն եւ Մօնաքան ալ շուտով պիտի յանձնուի:

Թ Ո Ւ Ս Ի Ա

Սախալինի բնակիչները կը շրտապեն հեռանալ, աճե՛նաճրաճե՛շտ պիտոյից պակասութեան պատճառով:

— Վարչապայէն կը հաղորդեն որ յունիս 14 ին գործաւորներու խումբ մը կը ստիպէ ուրիշ գործաւորներու գործաթող ընել, վերջը միացած կը ստիպեն խանութները դոցել, ու փողոցներուն մէջ պատնէշներ կը շինեն: Չինուորները այդ օրը կը յաջողեն առանց արիւնյեղութեան ամբարջուելու, սակայն երկրորդ առաւօտը կրկին ամբարջու փողոց մը կը համախմբուի ու զինուորները հրացան կը պարպեն եւ մարդ մը կը սպաննեն:

— Սունիս 13 ին Վարչապայի մէջ 690 հոգի ձերբակալուել են:

— Լոտզէնի մօտ 20,000 հրէաներ հեռացեր են, որովհետեւ լուր տարածուել է թէ կոտորած պիտի ըլլայ:

— Լոտզի մէջ անցեալ չորեքշաբթի հակառակարկական յեծ ցոյց մը տեղի ունեցեր է որու միջոցին 120 զինուորներ սպանուել են:

Հինգշաբթի երեկոյին գործաւորները յանկարծակի կը յարձակին խաչախի մը վրայ եւ անոր սեփական սրովը զինքը կը սպաննեն: Փամը 10 ին կառավարական զինեռունը կայրեն: Ամբողջ քաղաքը պատերազմի դաշտի վերածուած էր. զինուորներու հրազէններու պայթումներուն ժողովուրդը ատրճանակներով կը պատասխանէր, երկու հրէա աղջիկներ փորձեր են ճառքսել ամբօխին եւ զնգակահար եզեր են զինուորներէն:

— 16 ին Օտէսայէն կը հեռագրեն թէ Պետեմիկին զրահաւորի մէջ ապստամբութիւն ժագեր է կերակրին վատութեան պատճառով: Նախաստիները սպաննելը կը բռնեն կը կապեն եւ ծովը կը նետեն:

— Օտէսայէն 16 ին Լօնտօնի թերթներուն կը հեռագրեն հեռեւեալը. նաւահանգիստը եւ նաւերը բոցերու մէջ են, ապրտամբած զրահաւոր մը քաղաքը

կը ոմրակոծէ եւ սպանած է 4 խաղախներ: 17 հոգի ալ վիրաւորած է:

ՅՐԱՆՍՍԱ

Բարիզէն յունիս 16 ին կը հեռագրեն թէ կառավարութիւնը յայտարարելով Ռուվէի նօթայի Գերմանիոյ տուած պատասխանը գոհացուցիչ է. կը հաստատէ իշխան Պիլլօլի պատասխանելու պատրաստակամութիւնը եւ անոր յայտարարութիւնը կը զանայ իբր փաստ որ Գերմանիա յաւակնութիւններ չունի Մարօքոյի մէջ միացած եւրոպական տիրապետութիւն կազմակերպելու ոչ ալ ազգեցութեանց սահմաններ, որոնցիւ ալ միայն պիտի պահպանուի հանդիսանալ Սուլթանի գերիշխանութեան: միանգամայն ընդունելով Ֆրանսայի գերիշխանութիւնը Ալձերիոյ սահմաններու ուղղութեամբ:

— Հուսմէն կը հաղորդեն թէ թիթօնի Պերլինի կառավարութեան հաղորդած է որ Իտալիան պօնֆէլանսի մը միջոցին միայն պատուաւոր միջնորդի մը գերը պիտի կատարէ, ու թէեւ Գերմանիոյ դաշնակիցն է, բայց եւ կը մնայ նորանսայի բարեկամը:

— Գերմանական թերթերը քիչ բացառութեամբ, գոհ են Ֆրանսայի Գերմանական յարաբերութիւններու բարոքման համար:

ԹՈՒՍ—ՃԱՐՈՆԱԿԱՆ

Պ Ա Տ Ե Ր Ա Ջ Մ

Պատերազմի դաշտէն մեծ ընդհարումներու լուրեր չը կան: Ռուսները քանի մը տեղերէ ստիպուել են ետ նահանջել: Անձրեւային եղանակները կը խանգարեն երկու բանակներուն ալ: Բայց պարզօրէն կերելի որ ճարոցիները տրամադիր եւ վճռողական հարուած մը տալ ունենցուին, հաշտութեան աւելի ծանր պայմաններ առաջարկել կարենալու համար:

Կ Վ Ա Ս Ի
Ը Ա Ս Ի
Ս Ո

Վառնակեզորն փողոցի մը մէջ մէկ ու կէս յարկով քարայէն հաստատուն մը շինուած 95 քառակուսի մէթր տարածութեան վրայ, 245 քմէթր պարագ հողով, Ունի 5 սենեակ, մէկ խոհանոց, լուսացարան, հոր եւ ամեն ինչ որ անհրաժեշտ են ընտանիքի մը հանգստութեանը համար:

Փափագողք կրնան դիմել «Շարժում» խմբագրութեանը: